ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Պրոֆ. Կ. Դ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Հայ ճարտարապետության պատմության համար մեծ կարևորություն ունի նրա պարբերացումը։ Արդեն երևան են եկել հայ ճարտարապետության պատմությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն ընդգրկող մի քանի աշխատություններ, բայց նրանց մեջ պատմության պարբերացման հարցերը տարբեր լուծումներ են գտել։ Տվյալ խնդրում բոլորի կողմից ընդունելի միասնական տեսակետը կարևոր է։ Բնական է, որ այս հարցը միանգամից չի լուծվի, այլ անհրաժեշտ է այն քննել գիտական մամուլում և գիտաժողովներում, մինչև որ թեր ու դեմ կարծիքների հիման վրա մշակվի բոլորի կողմից ընդունելի մի տեսակետ։

Հայ ճարտարապետությունը թեև վաղուց է իր վրա գրավել հին մատենադիրների, հայ և օտար ճանապարհորդների, տեղագրող հեղինակների և գիտնականների ուշադրությունը, բայց ներկայիս հասկացողությամբ գիտական հիմքերի վրա դրվեց XX դարի առաջին տասնամյակում, ճարտարապետ Թորոս Թորամանյանի կողմից, որ 1903 թ. Հայաստան եկավ և այնտեղ մնաց մինչև իր կյանքի վերջը (վախճ. 1934 թ.)։ Նա մշակեց հայ ճարտարապետության պատմության հարցերը բոլոր այն հուշարձանների հիման վրա, որոնք նա տեսել էր, չափագրել և ուսումնասիրել։ Թորամանյանը սկսեց իր կատարած բազմաթիվ չափագրությունների հիման վրա ուսումնասիրել նրանց հորինվածքը, համեմատության մեջ դնել միմյանց հետ, որոշելու համար նրանց զարգացման ներքին օրինաչափությունները և կազմելու ճարտարապետության պատմության իր տեսությունը։

Դա դժվարին աշխատանք էր, մի մարդու ուժերից վեր, որովհետև հայտնի էին մեծ մասամբ կրոնական շենքեր՝ եկեղեցիներ, վանքեր, մատուռներ և այլն, իսկ աշխարհիկ բնույթի հուշարձանները հատուկենտ էին, այն էլ վատ պահպանված։ Անգամ Անի քաղաքի կանոնավոր պեղումները մեծ մասամբ ի հայտ էին բերում կրոնական շենքեր։

Ինչ խոսք, որ այդ բոլորն իրենց կնիքն էին դնելու Թորամանյանի կազմած տեսության վրա և այդ է պատճառը, որ նրա հայ ճարտարապետության պատմության տեսությունը գրեթե բացառապես հիմնված է եկեղեցական հուշարձանների վրա։ Պետք է լիներ հակառակը, որովհետև բոլորի համար պարզ է, որ եկեղեցական ճարտարապետության ձևերը ամենուրեք առաջ են եկել և զարգացել աշխարհիկ կառուցվածքների հիման վրա։

Այնուամենայնիվ Թորամանյանը կարողացավ ընդհանուր գծերով ճիշտ նշել հայ ճարտարապետության սկզբնավորման և զարգացման ուղիները։

սկսած IV դարից մինչև XIV—XV դարերը։ Դեռ ավելին։ Հաճախ նա իր տեսության մեջ ընդգրկում էր մինչև XVII դարը ներառյալ, զարգացման դարաշրջաններն անվանելով վերածնունդ, անկումային դարերից տարբերելու համար։ Հասկանալի է, որ այդ «վերածնունդները» ոչ մի առնչություն չունեն «ռենեսանսի» հասկացողության հետ։

Թորամանյանն իր ուսումնասիրությունները թեև մենակ էր կատարում, բայց ուներ տարբեր մասնագիտության գործակից ընկերներ, որոնց հետ նա մշտապես շփման մեջ էր գտնվում։ Դրանց թվում էին ժամանակի մեծագույն գործիչները՝ Նիկողայոս Մառը, նրա աշակերտ Հովսեփ Օրբելին, ինչպես նաև Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գյուրջին Հովսեփյանը, ազգագրագետ-հնագետ Երվանդ Լալայանը, արվեստագետներ Գարեգին Լևոնյանը, Տարագրոսը, իսկ հետագայում, սովետական կարգերի սրով, նաև Ալեքսանդր Թամանյանը, Մարտիրոս Սարյանը և շատ ուրիշներ։ Զարմանալի չէ, որ այսօր էլ, երբ Թորամանյանի մահվանից հետո անցել են երեք տասնյակից ավելի տարիներ, հայ ճարտարապետության մեջ գերիշխողը դարձյալ Թորամանյանի տեսությունն է, այս կամ այն հավելումներով կամ փոփոխություններով։

Սակայն այսօր պայմանները բոլորովին փոխվել են և միայն միջադարով չէ, որ զբաղվելու են հայ ճարտարապետության պատմաբանները։

Վերջին 30—40 տարիների ընթացքում մեր ժողովրդի պատմության ուսումնասիրությունը հսկայական քայլերով է առաջ գնացել։ Հիմնովին փոխվել են պատմության ուսումնասիրության մեթոդները, հայտնի են դարձել տարբեր դարաշրջանների պատկանող ճարտարապետության բազմաթիվ կառուցվածքներ, որոնց մասին ենթադրություն չունեինք։ Պեղումների միջոցով հնագետները ի հայտ են բերել բազմաթիվ հին ու միջնադարյան բնակավայրեր՝ իրենց դարաշրջանի համար բնորոշ աշխարհիկ և կրոնական կառուցվածքներով, բերդերով և պաշտպանական այլ շինություններով։ Այժմ հնագետների ուսումնասիրության առարկա են դարձել քարեդարյան անձավները, պղնձեդարյան և բրոնզեդարյան բնակատեղերն ու դամբանադաշտերը, բերդշները, մեգալիթյան քաղաքները, հնագույն նախահայկական ժայռագրությունների բազմաթիվ կենտրոնները, ուրարտական ամրոց-քաղաքները ինչպիսի են Էրեբունին, Արգիշտիխինիլին, Թեյշեբաինին, վաղագույն հայկական քաղաք Արմավիրը, հին Հայաստանի մայրաքաղաքներ Արտաշատը, հին Վաղարշապատը, Գառնի ամրոցը, ինչպես նաև միջնադարյան Դվինն ու այլ բնակատեղիներ։ Պեղումները հսկայական նյութ են տվել Հայաստանի նախաբնիկ դեղերի ճարտարապետության պատմությանը, սկսած քարեդարից մինչև հայկական ուշ միջնադար։ Դրանց պետք է միացնել նաև նոր և նորագույն սովետական շրջանի փառավոր ճարտարապետությունը, որպես հնի զարգացման տրամաբանական արդյունքություն։

Այս բոլորից հետևում է, որ մեր երկրի ճարտարապետությունը պետք է մասնագիտորեն ուսումնասիրել հին քարեդարից սկսած և հասցնել մինչև ներկային, առանց սահմանափակվելու XV կամ XVII դարերով։ Հասկանալի է, որ առանձին ուսումնասիրողներ կարող են իրենց համար նյութ ընտրել այս կամ այն դարաշրջանի ճարտարապետությունը, բայց տվյալ դեպքում մեր խոսքը վերաբերում է ընդհանրապես ճարտարապետության պատմության շրջանակներին։

Անդրադառնալով հայ ճարտարապետության պատմության այսօրվա վիճակին ժամանակագրական կարգով, պետք է նշենք, որ ուրարտական ճարտարապետությունն իր կայուն ուսումնասիրողն ունի հանձին Կոստանդին Հովհաննիսյանի, որը տեսական հարցերով զբաղվելուց բացի, պեղումների ղեկավար է Էրեբունի ամրոցում։ Նա ուրարտական ճարտարապետության մասին արժեքավոր մի քանի աշխատություններ է տպագրել խմբական (կոլեկտիվ) աշխատությունների մեջ և հանդես է եկել առանձին գրքերով ու հոդվածներով[1]։

Շնորհակալ գործ են կատարում Հովհ. Խալփախչյանը և Վարազդատ Հարությունյանը աշխարհիկ ճարտարապետության բնագավառում, թեև նրանք երկուսն էլ ունեն մեկից ավելի աշխատություններ եկեղեցական ճարտարապետության մասին ևս։ Նրանց աշխատությունների մեջ տեղ են գտել բնակելի տները, հասարակական կառուցվածքները՝ քարավանատները, բաղնիքները, աղբյուրները, սեղանատները, հյուրանոցները, գրադարանները և այլն[2]։ Աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրության բնագավառում զգալի ներդրումներ ունեն լենինգրադցի գիտնականներ Ն. Տոկարսկին և Ա. Յակոբսոնը։

Հայտնի է, որ այժմ հնագետները սիստեմատիկորեն ուսումնասիրում են Հայաստանի նախնադարյան ճարտարապետական մնացորդները։ Օրինակ, հնագետ Դեդեոն Միքայելյանը հրատարակել է իր կատարած աշխատանքների արդյունքների մի մասը, որը կարող է ուղեցույց հանդիսանալ ճարտարապետությունն պատմաբանների համար։ Սակայն Հայաստանի հնագույն ճարտարապետությունը դեռևս իր ուսումնասիրողը չունի, թեև այդ ուղղությամբ այժմ որոշ փորձեր արվում են։ Օրինակ՝ „Всеобщая история архитектуры" 12 հատորանոց աշխատության առաջին հատորում պրոֆ. Հ. Խալփախչյանը 4 էջ նվիրել է Հայաստանի հնագույն ճարտարապետությանը՝ „Древнейшие сооружения на территории Армении" վերնագրի տակ, բայց դա ավելի դեպքում օրգանապես չի կապվում Հայաստանի ճարտարապետության ամբողջության հետ, կարծեք թե միայն նշվում է այն հանգամանքը, որ Հայաստանն էլ ունեցել է նախնադարյան ճարտարապետություն, այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են Շենգավթի պղնձեդարյան հնավայրը, Ղոշուդաշի հուշարձանները, Շրեշ բլուրը և այլն[4]։

Այնուամենայնիվ Խալփախչյանի գրած այդ 4 էջը մի քայլ առաջ է նախկինում տպագրված գործերի համեմատությամբ, ներառյալ նաև «Ակնարկները», որի մեջ ճարտարապետության պատմությունը սկսվում է Ուրարտուով։ Սակայն, ինչպես ասացինք, Խալփախչյանը այդտեղ միայն մի քայլ է առաջ անցել մյուսներից, բայց ոչ ավելի։

Մեր կարծիքն այն է, որ Հայաստանի միջնադարյան ճարտարապետությունն իր ազգային ինքնատիպ ոճով զարգացել է տեղական նախահայկական մշակույթի ամուր հիմքերի վրա։ Հասկանալի է, որ այս հանգամանքը բոլորովին չի ժխտում հարևան ժողովուրդների հետ ունեցած շփումներն ու փոխ-

---

1 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 23—46։ «Всеобщая история архитектуры в 12 томах», т. I, М., 1970, էջ 253—272; К. Л. Оганесян, Архитектура Тейшебаини, Ереван, 1961 և այլ աշխատություններ ու հոդվածներ։

2 Վ. Հարությունյան, Քարավանատներն ու կամուրջները միջնադարյան Հայաստանում, Երևան, 1960։ Նույնի՝ «Անի քաղաքը», Երևան, 1964։ О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении, М., 1971, նաև հոդվածներ գիտական հանդեսներում։

3 Դ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1968։

4 „Всеобщая история архитектуры в 12 томах", т. I, էջ 253—256։

ազդեցությունները, բայց նրա ծագումն ու զարգացումը տեղի է ունեցել իր իսկ արմատների վրա։ Բոլորին հայտնի է, որ դասակարգային հասարակության պայմաններում հաճախ առաջ է գալիս երկվություն, ժողովրդական ճարտարապետության կողքին վերնախավը ստար ազդեցությունների շնորհիվ ներմուծումներ է կատարում իր կենցաղում, այդ թվում նաև ճարտարապետության մեջ։ Սակայն վերնախավի ճարտարապետությունը ծագում ու զարգանում է դարաշրջանի հետ և նրա հետ էլ վերանում է, իսկ ժողովրդականն իր գոյությունը շարունակում է դարից դար։ Հասկանալի է, որ իրարից տարբեր այդ երկու ճարտարապետությունները միմյանց հետ փոխհարաբերությունների մեջ են լինում և փոխադարձաբար ազդում են միմյանց վրա։

Ճարտարապետության պատմաբանների խնդիրն է պարզել ճարտարապետության այդ երկու տարբեր ուղղություններից յուրաքանչյուրի դեմքը և ցույց տալ նրանց փոխազդեցությունները, մանավանդ որ յուրաքանչյուր երկրում վերնախավի մշակույթը տեղայնանում է, ստդային հատկանիշներ ձեռք բերում։

* * *

Մինչև այժմ, բացի Թորամանյանի աշխատությունների երկու ստվար հատորից, լույս են տեսել մի քանի գրքեր և ժողովածուներ, որոնց մեջ հեղինակները աշխատել են Հայաստանի ճարտարապետությունը ներկայացնել ամբողջությամբ։

Այդպիսիների մեկը պրոֆ. Նիկոլայ Տոկարսկու գիրքն է, որ առաջին անգամ լույս տեսավ 1946 թ. „Архитектура древней Армении“ և երկրորդ անգամ՝ 1961 թ.՝ „Архитектура Армении IV—XIV вв.“ խորագրերի տակ։ Տոկարսկու այս գիրքը, կարելի է ասել, հաջողված մի փորձ է (Թորամանյանի և Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Հ. Ստրժիգովսկու երկհատոր գրքերից հետո) Հայաստանի ֆեոդալական դարաշրջանի ճարտարապետությունը մի ամփոփ աշխատության մեջ ընդգրկելու[5]։ Ինչպես գրքի վերնագրից իմանում ենք, հեղինակը հայկական ճարտարապետությունը ներկայացնելու է սկսած IV դարից, այսինքն քրիստոնեության մուտքից, բայց գրքի սկզբում, ներածության մեջ, հեղինակը ծրագրից դուրս համառոտակի նկարագրել է բնակելի հին տների ձևերը, հին քաղաքներն ու Հառնիի հեթանոսական տաճարը։

Բուն նյութը, այսինքն IV-ից մինչև XIV դդ. ճարտարապետությունը, Տոկարսկին բաժանել է երեք դարաշրջանների. առաջինը՝ IV—VII դդ., երկրորդը՝ IX—XI դդ., երրորդը՝ XII—XIV դդ.։ Գրքի մեջ դարաշրջանները բնորոշող վերնագրեր չկան։

Աշխատության մեջ Տոկարսկին ներքին ստորաբաժանումներում թեև ունի աշխարհիկ ճարտարապետությանը նվիրված հատվածներ, բայց դարաշրջանական բոլոր որոշիչ հատկանիշները Թորամանյանի նման վերցրել է եկեղեցական հուշարձաններից[6]։

Հաջորդը Անատոլի Յակոբսոնի գիրքն է, որ վերնագրված է «Очерк истории зодчества Армении»[7]։ Յակոբսոնը հայ ճարտարապետության պատմությունը բաժանել է չորս շրջանի։

---

[5] J. Strzygowski, Die baukunst der Armenier und Europa, Wien, 1918.

[6] Н. М. Токарский, Архитектура древней Армении, Ереван, 1948, նույնի՝ Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961.

[7] А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1950.

Առաջինը, որ նա անվանել է դասական ճարտարապետություն, ընդգրկում է V—VII դդ., երկրորդն անվանել է հայ ճարտարապետության վերածնունդ՝ IX—XI դդ. երրորդը, որ կոչել է նոր ոճի ծնունդ՝ XII—XIV դդ. և, վերջապես, չորրորդ դարաշրջանի մեջ ընդգրկել է XVI—XVII դդ. հուշարձանները և անվանել է հայ ճարտարապետության անկման շրջան։

1951 թ. լույս տեսավ Վ. Հարությունյանի և Ս. Սաֆարյանի կազմած «Памятники армянского зодчества» գիրքը, որը համառոտ ներածությունից և հուշարձանների բնորոշումից ու նկարագրությունից հետո, լուսանկարների ստվար ալբոմ ունի։ Հայ ճարտարապետությունն այդ գրքում բաժանված է հետևյալ դարաշրջանների. առաջինը՝ IV—VII դդ., երկրորդը՝ IX—XI դդ., երրորդը՝ XII—XIV դդ. և չորրորդը՝ XVII—XIX դդ.։ Մեր կարծիքով խմբական հուշարձանները երբեմն տեղադրված են դարաշրջանների մեջ անհաջող կերպով, որի մասին խոսք կլինի ստորև[8]։

Ժամանակագրական տեսակետից հայ ճարտարապետությունն ամբողջացնող հետևյալ աշխատությունը՝ ԴԱ արվեստի ինստիտուտի հրատարակած «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության» մի խումբ հեղինակների կազմած աշխատությունն է, որի մեջ ներածականից հետո բուն նյութը սկսվում է Ուրարտուի ճարտարապետությամբ։ Առաջին անգամ այստեղ է, որ նախահայկական շրջանի Ուրարտուն մտել է բուն նյութի մեջ (հեղ.՝ Կ. Հովհաննիսյան), որը այս գրքի առավելությունն է բոլոր նախորդ հրատարակությունների համեմատությամբ։

Ուրարտուին հաջորդում է այսպես կոչված ստրկատիրական շրջանի ճարտարապետությունը, որն ընդգրկում է վաղ և հին հայկական մի ամբողջ հազարամյակ՝ մ. թ. ա. VI դարից սկսած մինչև մ. թ. IV դարը։ Հեղինակը (ճարտ. դոկտ. Ա. Սահինյան) ճիշտ եզրակացության է հանգել գրելով, որ «Հայաստանում գոյություն է ունեցել ժամանակի հասկացողությամբ զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող տեղական հարուստ ճարտարապետություն և այդ ճարտարապետությունը, չնայած անտիկ արվեստի հետ ունեցած իր որոշակի շփմանը, ընթացել է զարգացման ինքնուրույն ուղիով»[9]։ Սակայն այդ բարձր աստիճանի վրա կանգնած տեղական ճարտարապետությունը գրեթե չի արտացոլվել այդ նույն աշխատության մեջ։

«Ակնարկի» հեղինակները միջնադարյան հայ ճարտարապետության սկիզբը համարել են V դարը և առաջին շրջանի տևողությունը սահմանափակել են VI դարով (Ա. Սահինյան)։ Այս շրջանն անվանել են վաղ ֆեոդալիզմի շրջան։

Հաջորդը փոխանակ VII դարով սկսելու, քանի որ նախորդն ավարտել էին VI-ով, սկսել են VI դարի երկրորդ կեսով (2-րդ գլխի հեղինակը Ստ. Մնացականյանն է)։ Սակայն երկրորդ շրջանը «Ակնարկի» մեջ Թորամանյանի նման ավարտվում է VII դարով, հակառակ Տոկարսկու, Յակոբսոնի և այլոց ստորաբաժանման, որոնք առաջին շրջանը IV կամ V դարից բերում հասցնում են մինչև VII-ի վերջը։ VIII դարը, ինչպես հայտնի է, անկումային ժամանակաշրջան էր, երբ Հայաստանում ոչինչ չէր կառուցվում։

---

[8] В. М. Арутюнян и С. А. Сафарян. Памятники армянского зодчества, М., 1951.

[9] «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 72։

Երրորդ շրջանը IX-ից մինչև XI դարն է ընդգրկում, իսկ չորրորդը՝ XII-ից գալիս հասնում է մինչև XIX դարը ներառյալ (հեղ. Կ. Հովհաննիսյան)։

Վերջին գլուխը նվիրված է Սովետական Հայաստանի ճարտարապետությանը (հեղինակ՝ Լ. Բաբայան)։

Մյուս աշխատությունը, որի մասին ուզում ենք մի քանի խոսք ասել, Մոսկվայում հրատարակված ճարտարապետության ընդհանուր պատմությունն է ռուսերեն լեզվով, որը նախ լույս տեսավ երկու հատորով[10] և այնուհետև՝ 12 հատորով։ Վերջինիս հրատարակությունը դեռևս չի ավարտվել[11]։

Այստեղ մենք կխոսենք միայն երկրորդ հրատարակության մասին, որն առաջինի համեմատությամբ զգալի կերպով ընդարձակված և բարեփոխված է։

Այս հրատարակությունը թեև համառոտ շարադրությամբ, բայց ավելի լրիվ չափով ընդգրկել է հայ ճարտարապետության տարբեր շրջանները։ Հայկական բաժինը (առաջին հատորի 6-րդ գլխի մեջ) սկսվում է Խալփախչյանի համառոտ հոդվածով, որ նվիրված է Հայաստանի հնագույն կառույցներին՝ Շենգավթի բնակավայրը, Ղոշունգաշը, մեգալիթյան հուշարձանները, վիշապները և այլն։ Այնուհետև Կ. Հովհաննիսյանի գրած ուրարտական ճարտարապետության մասն է գալիս, որին հաջորդում է «Հայաստանի ճարտարապետությունը» անվան տակ հին Հայաստանին նվիրված բաժինը (գլխավորապես Արմավիր, Տիգրանակերտ, Դառնի և այլն)։ Հայաստանի միջնադարյան ճարտարապետությունը ընդարձակ ծավալով մտել է համաշխարհային ճարտարապետության պատմությանը նվիրված այդ աշխատության 3-րդ հատորի մեջ, որտեղ ընդգրկված են IV դարից սկսած մինչև XIX դարի հուշարձանները հետևյալ բաժանումներով։

Առաջին շրջանը, որ ընդգրկում է IV—VII դարերը, իր հերթին բաժանվում է երեք ենթաշրջանների. առաջին՝ IV—V դդ., երբ, ըստ հեղինակի, Հայաստանում առաջ են գալիս և հաստատվում կոթողային ճարտարապետության հիմնական տեսակները. երկրորդի մեջ է մտնում VI դարը, սա նոր գաղափարների առաջացման մի անցողիկ փուլ է. երրորդն իր մեջ ընդգրկում է VI դարից սկսած մինչև VII-ի վերջը՝ հասունացած ազգային ոճի կոթողային ճարտարապետության շրջանն է և մեծ ազդեցություն է ունեցել հետագայի վրա[12]։ Հայ ճարտարապետության զարգացման երկրորդ շրջանը, որ ոչ ոքի կողմից վեճի առարկա չի եղել, այս աշխատության մեջ ևս ընդգրկում է IX—XI դարերը, երրորդը՝ XII—XIV դդ. և միջնադարի վերջին շրջանի մեջ է մտցվել XV—XIX դդ. հայ ճարտարապետությունը։

Գրքի մեջ հատուկ գլուխ է նվիրված Կիլիկիայի հայկական ճարտարապետությանը (1080—1375)։ Սա ևս գրքի դրական կողմերից մեկն է։ Ըստ ծրագրի, Սովետական Հայաստանի ճարտարապետությունը մտնելու է XII հատորի մեջ։

Չնայած իր ունեցած առավելություններին, ճարտարապետության ընդհանուր պատմության հայկական բաժինը ևս չի բավարարում այսօրվա պա-

---

[10] „Всеобщая история архитектуры", т. I, М., 1958, т. II, М., 1963.

[11] „Всеобщая история архитектуры в 12 томах". Մեզ հետաքրքրող հատորները լույս են տեսել՝ I, 1970, III, 1967։

[12] Նույն տեղում, հատ. I, էջ 253—283։

պահանջները՝ իր որոշ մասերի խիստ թռուցիկությամբ և նյութերի աղքատությամբ։

Այժմ ընդհանրացնելով մեր խոսքը, քննենք վերևում նշված աշխատությունների մեջ ընդունված պարբերացման վերաբերյալ տեսակետները։

1. Ամենից առաջ պետք է նշել, որ Հայաստանի նախնադարյան ճարտարապետությունը, որ այնքան հարուստ է ամենանախնականից սկսած մեկը մյուսին հաջորդող հազարավոր հուշարձաններով, մեր երկրում առաջ է եկել և զարգացել ներքին օրինաչափությունների հիման վրա, բայց, ինչպես ակնարկեցինք վերևում, մինչև այժմ չունի իր մասնագետ հետազոտողը։ Հնագետների հայտնաբերած հազարավոր հուշարձաններից դեռևս շատ քչերն են ընդգրկվել ճարտարապետության պատմության մեջ, այն էլ իբրև ներածություն, ցույց տալու համար, որ Հայաստանն էլ ունեցել է նախնադարյան հուշարձաններ։

Նախաուրարտական, տեղաբնիկ ցեղերի ճարտարապետության հարցերով պետք է զբաղվեն ոչ թե միջնադարի մասնագետները, ինչպես այդ տեսնում ենք այժմ, այլ նա պետք է ունենա իր մշտական ուսումնասիրողը։

Այդ հնագույն ժամանակաշրջանի ճարտարապետությունը պետք է ունենա բոլոր այն ստորաբաժանումները, ինչ ունեն մշակույթի մյուս բնագավառները, սկսած քարեդարից մինչև բրոնզի և երկաթի դարերը ներառյալ։

Չպետք է մոռանալ, որ նախնադարի բիրտ քարերով կառուցված հուշարձանները հիմնաքար են հանդիսացել հետագայի բարձրարվեստ հուշարձանների համար։ Ճարտարապետության պատմաբանը ամենից առաջ պետք է ներքին օրինաչափությունների մեջ որոնի ոճերի զարգացման աղբյուրները։

2. Եթե Ուրարտուի ճարտարապետությունն ունի իր հետազոտողը, այդ նույն բանը չի կարելի ասել Ուրարտուի դարաշրջանի ժողովրդական ճարտարապետության մասին, որ ճարտարապետության պատմության մեջ գրեթե չի բացահայտված մինչև օրս։

3. Պետք է որոշակիորեն առանձնացնել և առանձին բաժինների մեջ ամփոփել Հայկական լեռնաշխարհի նախահայկական ճարտարապետությունը և հայկականը, թեև մեկը մյուսի տրամաբանական սկիզբն է հանդիսանում։ Նախահայկականն ունենալու է երկու ենթաբաժին՝ նախնադարյան և ուրարտական, իսկ հայկականը մի քանի բաժիններ՝ վաղ և հին հայկական, միջնադարյան և նոր ու արդի դարաշրջանների բաժիններ։

4. Հայաստանում չի ուսումնասիրված նաև վաղ հայկական շրջանի ճարտարապետությունը։ Այդ շրջանն ունի բազմաթիվ հնավայրեր, անգամ քաղաքներ, ինչպիսիք են Երվանդաշատը, Հին Արմավիրը (որ այժմ պեղվում է) և շատ ուրիշներ։

«Ակնարկի» հեղինակները ստրկատիրությունը բերել են հասցրել մինչև մ. թ. IV դարը։ Փակագծերի մեջ գրել են՝ VI դ. մ. թ. ա.—IV դ. մ. թ., հաջորդ գլուխը դրել են մեր թվականության IV—VI դդ., որ դարձյալ անհամաձայնության հետևանք է։ Եթե մի դարաշրջանը վերջանում է IV դարով, հաջորդը պետք է սկսվի V-ով և կամ պետք է ճշտվեն դարերի տասնամյակները։

Մենք այն տեսակետին ենք, որ քրիստոնեության առաջին դարերին վերագրվող եկեղեցիներից շատերը հեթանոսական տաճարներ են եղել և, ինչպես Ագաթանգեղոսն է վկայում, հետո վեր են ածվել եկեղեցիների։ Եվ որովհետև այդ հնագույն տաճարներից շատերը բազիլիկներ են, հետևապես նրանք

ոչ թե քրիստոնեության հետ միասին մուտք են գործել Հայաստան Ասորիքից, այլ ավելի հնում գոյություն են ունեցել Հայաստանում։ Նրանց միաժամանակյա գոյությունը Հայաստանում և Ասորիքում շատ բնական է, որովհետև դրանք մշակույթի տեսակետից իրար հետ սերտ կապեր ունեցող հարևան երկրներ են եղել։

Թորամանյանը հայ ճարտարապետության զարգացման իր տեսությունը թեև շատ վաղուց էր կազմել, դեռևս ներկա դարի առաջին տասնամյակին, բայց մի քանի անգամ վերանայել է այն և որոշ ճշտումներ ու փոփոխություններ մտցրել։ Վերջին անգամ այդ հարցին նա անդրադարձել է իր մահվանից մեկ-երկու տարի առաջ, երբ Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի վարիչ էր և այդ բաժնի համար գրում էր հուշարձանների «հատկանշական ցուցակը»։ Այդ աշխատության ներածության մեջ նա Հայաստանի հնագույն ճարտարապետության մասին գրել է. «Առհասարակ հենվելով իմ հետախուզությունների վրա, Հայաստանում մեր թվականությունից առաջ գոյություն ունեցող ճարտարապետական նախնական մնացորդները երկու մասի են բաժանվում. 1. Նախաուրարտական, 2. Ուրարտական կամ խալդական»[13]։

Հայտնի է, որ Թորամանյանը միջնադարի մասնագետ էր, բայց իր ուղևորությունների ընթացքում ուսումնասիրել է նաև նախնադարյան հուշարձանները և այդ հանգամանքը հիմք է ծառայել, որպեսզի հնագույն շրջանը ևս մտցնի իր տեսության մեջ[14]։ Թորամանյանը Հայաստանի միջնադարյան ճարտարապետությունը սկսել է IV դարի սկզբով և նրա առաջին շրջանը եզրափակել է V դարի վերջով։ Դեռ ավելին։ Իր շարադրության մեջ ակնարկներ ունի այն մասին, որ քրիստոնեության մուտքից առաջ, միջնադարյան ճարտարապետության սաղմերը Հայաստանում գոյություն են ունեցել մեր թվարկության առաջին երեք դարերում։

Թորամանյանը միջնադարյան հայ ճարտարապետության վերելքի չորս շրջան է ընդունում IV-ից սկսած մինչև XIV դարերի ընթացքում։ Հինգերորդ վերելքը նա վերապահել է սովետահայ ճարտարապետությանը։ Այսպես. առաջին վերելքը՝ IV դարի սկզբից մինչև V դարի վերջը։ Երկրորդը՝ VII դարի սկզբից մինչև վերջ։ Երրորդը՝ X—XII դդ.։ Չորրորդը՝ XIII—XIV դդ. և հինգերորդը՝ սովետական շրջանում։

Նա XV—XIX դդ. Հայաստանի ճարտարապետության խառնակ ոճերի շրջան է համարել և այդ ժամանակաշրջանում վերելք չի ընդունել։

Վերոհիշյալ բոլոր հեղինակների աշխատությունները հաշվի առնելով, գալիս ենք այն եզրակացության, որ ճիշտ են այն հեղինակները, որոնք միջնադարյան հայ ճարտարապետության առաջին շրջանը սկսում են IV դարի սկզբով, բացի Ա. Յակոբսոնից, որ միջնադարն սկսում է V դարից։ Ինչպես ասացինք, Ա. Յակոբսոնի գրքում տեղ չեն գտել բազիլիկ կառուցվածքները, ըստ երևույթին ոչ թե պատահարար, այլ այն սխալ տեսակետի հիման վրա, որ նա բազիլիկ շենքերը հայկական չի համարում, թեև դրանց թիվը IV—V դարերում մեծ է։

---

13 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 109։

14։ Նախնադարյան հուշարձանների վերաբերյալ ուսումնասիրությունը հրատարակվել է նրա աշխատությունների ժողովածուի Ա հատորի սկզբին։

Եթե հայ ճարտարապետության սկզբնավորության մասին Ա. Յակոբսոնիից բացի մնացած հեղինակները մի ընդհանուր տեսակետ ունեն, ապա վիճակը բոլորովին այլ է առաջին փուլի ավարտման ժամանակի վերաբերյալ։ Այս խնդրում որոշակիորեն երկու տարբեր տեսակետներ գոյություն ունեն։ Դրանցից մեկը Թորամանյանի տեսակետն է, ըստ որի առաջին փուլը ավարտվում է V դարի վերջում[15], երկրորդ տեսակետի կողմնակիցներն են Տոկարսկին, Խալֆախչյանը. Հարությունյանն ու Սաֆարյանը, ինչպես նաև Յակոբսոնը, որոնք հայ ճարտարապետության առաջին փուլը բերում հասցնում են մինչև VII դարի վերջը։

Բացառություն են կազմում «Ակնարկի» հեղինակները, որոնք առաջին փուլը երկարաձգում են VI դարով։ Սա, ըստ էության, Թորամանյանի տեսությանը չի հակասում, այլ լրացնում է նրան, որովհետև V դարի վերելքից հետո VI դարը որևէ էական փոփոխություն չի մտցնում ճարտարապետության ուղղությունների մեջ, այլ V դարի շարունակությունն է կազմում։

Ս ներ կարծիքով սխալ են բոլոր նրանք, ովքեր VII դարը զարգացման առաջին փուլի մեջ են դնում։

IV և V դարերի պարզունակ քրիստոնեության դավանանքը, որին հետևում էին հայերը, VII դարում բոլորովին փոխվեց, հարուստ ու ճոխ բովանդակություն ստացավ և նրա ազգային ինքնատիպությունն այն աստիճան ամրապրնդվեց, որ բյուզանդական կայսրերն անգամ իրենց զորաբանակների օգնությամբ չկարողացան հայերին դավանափոխ անել։ Մշակույթի մյուս բնագավառները ևս տարբեր են V և VII դարերում։

Վերջիվերջո, ինչպե՞ս կարելի է բազիլիկ միանավ կամ եռանավ տաճարները և Զվարթնոցն ու Հռիփսիմեն միևնույն աստիճանի վրա դնել, մանավանդ որ IV—V դարերի և VII դարի սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները ևս միմյանցից բոլորովին տարբեր են։

Հաջորդ դարաշրջանը, ըստ Թորամանյանի և «Ակնարկի» հեղինակների, VII դարն է, միայն թե «Ակնարկի» հեղինակներն այդ փուլը սկսում են VI դարի երկրորդ կեսից։ Այստեղ տարբերությունը մեծ չէ, քանի որ այժմ պարզվում է, որ VII դարին վերագրվող հուշարձաններից մի քանիսը կառուցվել են VI դարի երկրորդ կեսում, ինչպես, օրինակ, Ավանի կաթողիկե եկեղեցին, Պտղնին և այլն։ Սակայն «Ակնարկի» հեղինակներն իրենց գրած գլուխների տարեթվերի մեջ հակասությունները կամ անհամաձայնությունները վերացնելու համար նախորդ գլուխը պետք է եզրափակեին VI դարի առաջին կեսով, որպեսզի հաջորդը կարողանային սկսել VI դարի երկրորդ կեսից։

Հետևյալ փուլը Թորամանյանը դրել է X—XII դարերում, մյուս բոլոր հեղինակները՝ IX—XI-ում։

Սկիզբը IX-ից կամ X-ից դնելը որևէ էական տարբերություն չունի, որովհետև արաբական տիրապետության երկուհարյուրամյա դատարկ ժամանակաշրջանից հետո շինարարական նոր դարաշրջանի նախակարապետները, որ Սե-

---

15 Հայ ճարտարապետության զարգացման վերաբերյալ Թորամանյանի տեսության մասին վերապահությամբ պետք է խոսենք, որովհետև նա ոչ թե փուլերի տևողությունն է հաշվի առնում իր գործերի մեջ, այլ ճարտարապետության ծաղկման կամ վերելքի շրջանները միայն, որոնց նա պայմանականորեն անվանում է «վերածնունդ»։

վանի վանքերն են, կառուցվել են 874 թ., այսինքն IX դարի վերջում, բայց XII դարը կապել Բագրատունյաց շրջանի հետ, կարծում ենք բոլորովին նպատակահարմար չէ, որովհետև XII դարի հուշարձաններն օրգանապես կապվում են XIII և անգամ XIV դարերի հետ։ Հաջորդ փուլը Թորամանյանը համարում է XIII—XIV դարերը, Խալփախչյանը՝ XII—XIV դարերը (առաջին հրատարակության մեջ XII-ից մինչև XIV դարի սկիզբը)։

Այս հատվածում, կարծում ենք, ճիշտ չեն վարվել «Ակնարկի» հեղինակները, որոնք XII-ից մինչև XIX դարը մի ստորաբաժանման մեջ են դրել ներառյալ նաև Կիլիկիան (հեղ.՝ Կ. Հովհաննիսյան)։ Հեղինակներին հայտնի է, որ XII դարը երբեք չի կարելի XIX դարի հետ միասին միևնույն փուլի մեջ դնել։

Թորամանյանը թեև մի ժամանակ հայկական ճարտարապետությունը բերում և հասցնում էր մինչև XVII—XVIII դարերը և գրում էր Մուղնու (XVII դ.), Շողակաթի (XVIII դ.) տաճարների մասին[16], բայց իր կյանքի վերջում մշակած տեսության մեջ XIV դարից այս կողմը չի գալիս, պատճառաբանելով, որ Հայաստանում «15-րդ դարից հետո է, որ սկսած են արևելյան և արևմտյան ոճերի անհամաչափ մի խառնուրդով երևան գալ մեծ և փոքր շինություններ, որոնք ոչ տեղական հատկանիշ էին արտահայտում և ոչ Հայաստանում ապրող ժողովրդի հոգեբանությունը։ Միևնույն ժամանակ Հայաստանը շրջապատող հեռու և մոտ ազգերի ոճերից ոչ մեկին չէին ենթարկվում։ Այս խառնակ և անկերպարան երևույթը, որ երկար է տևում, ցույց է տալիս անկում Հայաստանի հատուկ ճարտարապետական ոճին»[17]։

Կարծում ենք, որ որևէ դարաշրջանի ճարտարապետություն, ինչ բնույթ էլ ունենա նա, պետք է իր արտահայտությունը գտնի պատմության էջերում, մանավանդ որ XVII դարի վերջերին և XVIII-ի սկզբներին հայ ճարտարապետությունը ինչ որ չափով վերելք ապրեց, հատկապես Արարատյան նահանգում։

Հուշարձանների ժամանակագրությանը վերաբերող մի դիտողություն ևս. սովորություն է դարձել խմբական հուշարձանները, ասենք մեծ վանքերը, վերագրել ավելի ուշ դարաշրջանների, քան թե նրանց գլխավոր տաճարները։ Այսպես օրինակ. «Ակնարկի» մեջ (և ոչ միայն այդտեղ, այլև ուրիշ աշխատություններում). Տաթևի, Սանահնի, Հաղբատի վանքերը մտել են XII—XIII դդ. ճարտարապետության մեջ, այն դեպքում, երբ այդ վանքերի գլխավոր եկեղեցիները. որոնց շուրջը հետագայում հարակից շենքեր են կառուցվել, պատկանում են X դարին։ Դեռ ավելին, Սանահնում գլխավոր եկեղեցին կառուցվել է X դարում (966 թ.), երկրորդ եկեղեցին նույնպես X դարում, գրադարանը՝ XI դարում (1063 թ.)։ Այդ բոլորին հակառակ «Ակնարկի» մեջ վանքի կոմպլեքսը նկարագրվել է XII—XIX դարերի ճարտարապետության պատմության մեջ։

Մեր կարծիքով, վանական կոմպլեքսները պետք է դնել նրանց հիմքը հանդիսացող գլխավոր շենքի կառուցման թվականի կամ դարաշրջանի մեջ։

Այլ բան է. օրինակ, Հովհաննավանքը։ Այնտեղ հնուց թեև գոյություն է ունեցել IV—V դդ. միանավ բազիլիկ եկեղեցին, բայց վանքի գլխավոր տաճարը կառուցվել է 1216—1221 թթ.։ Հասկանալի է, որ այս վանքը պետք է նկա-

16 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., Բ ժողովածու, էջ 223 և 226, Ա ժողովածու, էջ 135։
17 Նույն տեղում. Բ ժողովածու, էջ 109։

բագրվի XIII դարին վերաբերող գլխում, իսկ երբ խոսք լինի միանավ բազիլիկի մասին, պետք է նշել, որ նա IV—V դարերի գործ է։

Այս բոլորից եզրակացնում ենք.

1. Հայաստանի ճարտարապետության պատմությունը պետք է սկսել քարեդարից՝ ներգրավելով բոլոր կարևոր հնագույն հուշարձանները։ Հին դարաշրջանների պատմությունը պետք է շարադրվի հանգամանորեն, ըստ քարեդարի և նրան հաջորդող շրջանների բաժանումների և ոչ թե իբրև գրքի ներածություն։

2. Յուրաքանչյուր դարաշրջան պետք է ունենա իր անվանումը, գիտության մեջ ընդունված բնորոշումներով (հին քարեդար, նոր քարեդար, պղնձի դար, բրոնզի դար և այլն)։

3. Հետագա դարաշրջանների (դասակարգային հասարակության) համար ևս պետք է ունենալ դարաշրջանները բնորոշող գիտական միասնական անվանումներ ըստ ֆորմացիաների (ստրկատիրական կարգերի, ֆեոդալիզմի, կապիտալիզմի, սոցիալիզմի դարաշրջանների ճարտարապետություն) կամ ըստ դարերի (IV—VI դդ., VII դարի, IX—XI դդ. ճարտարապետություն և այլն) և կամ ըստ քաղաքական իշխանությունների և դինաստիաների, բայց բոլոր դեպքերում մի միասնական սիստեմով։

Մեր կարծիքով, չի կարելի մի դարաշրջանն անվանել «Հայկական ճարտարապետությունը վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում», իսկ հաջորդը՝ «Հայկական ճարտարապետությունը VI դարի երկրորդ կեսից մինչև VII դարի վերջը», ինչպես արել են «Ակնարկի» հեղինակները։

Եթե «Ակնարկի» հեղինակները IV—VI դարերի ճարտարապետությունը բնորոշել են իբրև վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի արտահայտություն, ապա հաջորդ դարերի ճարտարապետությունը ևս պետք է բնորոշվեր ֆեոդալիզմի զարգացման հաջորդ փուլի անունով և այդպես շարունակ։

4. Հայկական ճարտարապետությունն ազգային շրջանակների մեջ ինքնամփոփ չի եղել, նա շփման մեջ է եղել հարևան և անդամ հեռավոր երկրների հետ և հայ գաղթականության միջոցով իր ազդեցությունը տարածել է մի շարք երկրների վրա, որտեղ բացի իրենց՝ հայերի համար կառուցած շենքերից, հայ վարպետները բազմաթիվ կառուցումներ են կատարել տեղացիների համար (Բուլղարիայում, Ռումինիայում, բուն Թուրքիայում, Ղրիմում, Ռուսաստանում և այլ երկրներում)։ Հայ ճարտարապետության պատմության մեջ պետք է տեղ տալ նաև հայ գաղթավայրերի ճարտարապետությանը։

5. Սովետական Հայաստանն այսօր Անդրկովկասի հանրապետություններից մեկն է։ Սակայն հնագույն, հին և միջին դարերում Հայաստանը տարածվում էր Կովկասից շատ հեռու, նա Հայկական լեռնաշխարհն էր զբաղեցնում և համարվում էր Առաջավոր Ասիայի երկրներից մեկը։ Այդ տեսակետից դժվար է համաձայնվել „Всеобщая история архитектуры" բազմահատոր աշխատության խմբագրության հետ, որը հնագույն, հին և միջնադարյան Հայաստանի ճարտարապետությունը, Ուրարտուն իր մայրաքաղաքով և Կիլիկիայի հայկական ճարտարապետությունը դրել է Անդրկովկասյան երկրների խմբի մեջ, Առաջավոր Ասիայի երկրների շարքում դնելու փոխարեն։

К ВОПРОСУ О ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ АРМЯНСКОГО ЗОДЧЕСТВА

Проф. К. Г. КАФАДАРЯН

(Резюме)

Для истории армянского зодчества важное значение имеет вопрос о ее периодизации, установление того, на какие эпохи, формации подразделяется эта история и чем характеризуется каждая из эпох.

На основе критического рассмотрения существующих точек зрений по данному вопросу автор приходит к заключению, что в предысторию армянского зодчества должна включаться также история первобытной архитектуры, начиная с палеолита. В этой части необходимо всесторонне использовать результаты археологических работ, проведенных в Армении. Кроме того, при характеристике различных эпох должна учитываться их политическая и социально-экономическая история. История армянского зодчества должна включать в себя также строительное искусство больших армянских колоний прошлых времен.